Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ*

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պատմաբանները, իրավամբ, համարում են շրջադարձային կետ հայ ժողովրդի կյանքում, քանի որ այդ միացումից հետո առաջադիմական մեծ տեղաշարժեր կատարվեցին հայերի թե՛ հասարակական-քաղաքական և թե՛ գիտության ու մշակույթի բնագավառներում։ Այդ տեղաշարժերը նշանակալից էին նաև նրանց տնտեսական կյանքում։

Պարսկական տիրապետության ժամանակ հայ ժողովուրդը չուներ անձի և գույքի ապահովություն։ Շահական սատրապները կամ ավազակային հորդաները ցանկացած ժամանակ հարձակվում էին հայկական գյուղերի ու քաղաքների վրա, քանդում ու ավերում էին դրանք, կոտորում ու կողոպտում էին բնակիչներին։ Գյուղացիներն ու արհեստավորները տանից դուրս էին գալիս այլևս չվերադառնալու երկյուղը սրտերում։ Արդյունաբերողներն ու առևտրականները սկսում էին իրենց գործունեությունը ահի և սարսափի պայմաններում։

Հայ ժողովրդի ղգալի զանգվածներ, չկարողանալով այլևս տանել օտարի ծանր լուծը, հարկադրված էին թողնել հայրենիքը և գաղթել ուրիշ երկրներ, ցրվել ու թափառել աշխարհով մեկ։ Դրա հետևանքով խստորեն նվազել էր նրա թիվը, իսկ մահմեդական տարրերինը, ընդհակառակը, աճել։ Բավական է նշել, որ 1827—1828 թթ., այսինքն միացման հենց նախօրյակին, Արևելյան Հայաստանում հայերը կազմում էին բնակչության թվի ընդամենը 33,8 տոկոսը (կամ 57.305 մարդ), մինչդեռ ադրբեջանցիները՝ 49,7 տոկոսը (կամ 84.089 մարդ), քրդերը՝ 16 տոկոսը (կամ 26.911 մարդ), իսկ այլ ժողովուրդները՝ 0,5 տոկոսը (կամ 850 մարդ)։ Հայերի թիվը, անկասկած, ավելի կնվազեր, եթե նրանց հայրենիքը մի քանի տասնամյակ ևս շարունակեր մնալ իրանական տիրապետության տակ։

Շահական կարգերը խոչընդոտում էին Արևելյան Հայաստանի տնտեսության զարգացմանը։ Երկրագործությունը գտնվում էր խիստ հետամնաց վիճակում։ Մշակվում էր երկրի հողային տարածության սոսկ փոքր մասը։ Իսկ մնացածը կամ ծառայում էր կիսաքոչվորների ու քոչվորների համար որպես արոտավայր, կամ պարզապես մնում էր անօգտագործելի։ Շահագրգռված չլինելով աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ, գյուղացիները խուսափում էին ընդարձակել իրենց ցանքատարածությունները։ Նրանք աշխատում էին ցանել ու հավաքել այնքան, որ բավարարեր իրենց անհրաժեշտ պահանջները, ապահովեր իրենց կյանքի գոյությունը։

Ավելի անմխիթար վիճակում էր անասնապահությունը։ Այն կենտրոնաց-

* Սույն զեկուցումը կարդացված է Հայկական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական սեսիայում՝ նվիրված Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման 140-ամյակին, 1968 թ. նոյեմբերի 26-ին։

ված էր դերազանցապես կիսաքոչվոր ու քոչվոր քրդերի կամ ադրբեջանցիների ձեռքում և տարվում էր էքստենսիվ եղանակներով։ Նստակյաց բնակչության համար անասնապահությունն ուներ բացառապես օժանդակ նշանակություն։

Գյուղացիներն օգտագործում էին այնպիսի հետամնաց երկրագործական գործիքներ, որոնք դարեր շարունակ, անցնելով սերնդից սերունդ, տիրապետող սոցիալ-տնտեսական ռեժիմի հետևանքով, մնացել էին միևնույն մակարդակի վրա։

Զափազանց անմխիթար էր նաև Արևելյան Հայաստանի արդյունաբերության վիճակը։ Տակավին տիրապետում էին տնային արհեստագործությունն ու արհեստները։ Ճիշտ է, տեղ-տեղ կային նաև մանր ապրանքային բնույթի արհեստանոցներ, բայց դրանք երկրի տնտեսության մեջ էական դեր չէին խաղում։ Նրանցից շատերն ունեին սեզոնային բնույթ։ Մանուֆակտուրային տիպի ձեռնարկությունների թիվը այնքան քիչ էր, որ չարժե անգամ հիշատակել, իսկ գործարանների մասին խոսելն արդեն ավելորդ է։ Երկրի հանքային հանածոները կամ անմշակ էին, կամ մշակվում էին ամենապրիմիտիվ եղանակներով։ Խիստ անկանոն էր պղնձի արտադրությունը, իսկ աղինը՝ կատարվում էր ավելի անբավարար ձևերով։

Պարսկական տիրապետության ժամանակ թույլ էր զարգացած նաև առևտուրը։ Երկրի բազմաթիվ շրջաններում տիրապետում էր նրա արխայիկ ձևը՝ ապրանքափոխանակությունը։ Արհեստավորները փոխանակում էին իրենց շինվածքները կամ գործվածքները գյուղատնտեսական մթերքների հետ, իսկ գյուղացիները՝ ընդհակառակը։ Դրամը թեև գոյություն ուներ, բայց այն դեռ չէր թափանցել տնտեսության բոլոր ճյուղերը և չէր դարձել ամեն տեսակի գործարքների չափանիշը։ Երկրում շարունակում էր գերիշխել նատուրալ տնտեսությունը։ Շինականներն ու արհեստավորները իրենք էին արտադրում իրենց անհրաժեշտ համարյա բոլոր պարագաները և իրենք էլ սպառում էին դրանք։ Երկրի յուրաքանչյուր դավառ ամփոփված էր իր ներքին կյանքով, ապրում էր իր ուրույն աշխարհով, ուներ իր չափն ու կշիռը, դրանց տարբեր անվանումը։ Աշխատանքի հասարակական բաժանումը չէր խորացել ո՛չ երկրագործության և ոչ էլ արդյունաբերության մեջ։ Այն արտահայտվում էր գերազանցապես նրանով, որ արհեստը քիչ թե շատ բաժանված էր գյուղատնտեսությունից, իսկ գյուղատնտեսությունը՝ անասնապահությունից։

Շահական կարգերը խոչընդոտում էին նաև Արևելյան Հայաստանի ճանապարհների ու փոխադրական միջոցների զարգացմանը։ Երկրում բացարձակապես գերիշխում էին սայլուղիներն ու դրաստային ճանապարհները։ Խճուղիներ չկային, իսկ երկաթգծի մասին խոսելն ավելորդ էր։

Պարսկական տիրապետության ժամանակ Արևելյան Հայաստանում գերիշխող արտադրաեղանակը ասիական բռնապետական ֆեոդալիզմն էր։ Խաներն ու բեկերը, մուլքադարներն ու թիուլդարները, կազմելով շահագործող վերնախավը, անլուր կեղեքման ու հարստահարման էին ենթարկում բազմահազար աշխատավոր գյուղացիությանը։ Սահմանելով ֆեոդալական գանձումների որոշ նորմեր, նրանք, սակայն, երբեք չէին բավարարվում դրանցով, վերցնում էին գյուղացիներից ինչ ուզում էին կամ ինչքան կարող էին։ Նրանք կողոպտում ու կեղեքում էին նաև արհեստավորներին ու առևտրականներին և անհնարին դարձնում արտադրության կապիտալիստական եղանակի առաջացումը։ Ֆ. Էնգելսը, խոսելով Արևելքի երկրների մասին, նշում էր, որ ասիական «տի-

բապետությունը անհամատեղելի է կապիտալիստական հասարակության հետ։ Ձեռք բերած հավելյալ արժեքը ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, գոյություն չունի բուրժուական ձեռնարկուական գործունեության առաջին հիմնական պայմանը—վաճառականի անձի ու սեփականության ապահովությունը»[1]։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջադիմական հսկայական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում։ Ռուսական հզոր զենքը ամենուրեք արմատախիլ արեց ու բնաջնջեց բոլոր ավազակային հրոսակախմբերը։ Սահմանվեց անձի և գույքի հուսալի ապահովություն։ Շինականն ու արհեստավորը այլևս չէին մտահոգվում իրենց կյանքի կամ ունեցվածքի պահպանման մասին, իսկ առևտրականն ու արդյունաբերողը բավական լայն հնարավորություններ ստացան իրենց գործունեության ծավալման համար։

Այդ կարևոր ու անհրաժեշտ հանգամանքի շնորհիվ Արևելյան Հայաստանում հայ ժողովուրդը սկսեց արագորեն աճել։ Բավական է նշել, որ 5—6 տարվա ընթացքում (1827—1832 թթ.) հայերի թիվը աճեց ավելի քան 147 տոկոսով։ 1832 թ. Արևելյան Հայաստանի ժողովուրդները իրենց թվաքանակով ու տոկոսային հարաբերությամբ արդեն հետևյալ պատկերն էին ներկայացնում՝ հայերը կազմում էին 141.682 շունչ կամ բնակչության 58,8 տոկոսը, ադրբեջանցիները՝ 83.165 շունչ կամ բնակչության 34,5 տոկոսը, քրդերը՝ 15.415 շունչ կամ բնակչության 6,4 տոկոսը։ Այլ ժողովուրդները կազմում էին 850 շունչ կամ բնակչության 0,3 տոկոսը[2]։

Միանգամայն հասկանալի է, որ հայերի այդպիսի արագ աճը պայմանավորված էր ոչ այնքան բնական, որքան արհեստական եղանակներով։ Իմանալով իրենց հայրենիքի ազատագրման մասին, բազմաթիվ հայեր թողեցին օտար հողը և տուն վերադարձան։ Հետագա տարիներին Արևելյան Հայաստանի բնակչության աճը ոչ միայն կանգ չառավ, այլև անշեղորեն շարունակեց առաջ ընթանալ։ Այս կապակցությամբ հետաքրքիր են հետևյալ տվյալները. Արևելյան Հայաստանում բնակչության թիվը կազմում էր[3].

1831 թ. — 161.747 շունչ
1873 թ. — 496.140 շունչ
1886 թ. — 635.833 շունչ
1897 թ. — 797.855 շունչ
1913 թ. — 1.000.100 շունչ։

Այլ կերպ ասած՝ 82 տարվա ընթացքում Հայաստանի բնակչությունն աճեց ավելի քան 6 անգամ։ Այս աճը նույնպես տեղի էր ունեցել գերազանցապես ներգաղթի հետևանքով։ Մեծ թվով հայեր եկան Թուրքիայից, ավելի ճիշտ՝ Արևմտյան Հայաստանից, որտեղ օրըստօրև կոտորվում ու բնաջնջվում էին օսմանյան բարբարոսների կողմից։ Նրանք տեղաշարժվեցին Արևելյան Հայաստան մասնավորապես 1828—1829, 1853—1856, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների, ինչպես և 90-ական թվերի հայկական կոտորածների տարիներին։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 22, стр. 33.

[2] *Խ. Հ. Ավդալբեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 19։*

[3] «Населенные пункты и население Армянской ССР», Статистический сборник, Ереван, 1962, стр. 55.

Արևելյան Հայաստանը դարձավ հայ ազգի կազմավորման օջախը։

Միացումից հետո Արևելյան Հայաստանի տնտեսությունը դուրս եկավ դարավոր լճացումից ու քայքայումից և ընթացավ զարգացման ուղիով։ Որքան էլ այդ զարգացումը դանդաղ էր ու անհավասարաչափ, այնուամենայնիվ կայուն էր ու անշեղ։

Լուրջ տեղաշարժեր կատարվեցին գյուղատնտեսության մեջ։ Ընդարձակվեցին ցանքատարածությունները։ Երկրի համարյա բոլոր վայրերում կրճատվեցին արոտատեղիները։

Ցանքատարածությունների ընդարձակման հետ մեկտեղ աճում էր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ XIX դարի մինչև 70-ական թվականներին բավական արագ տեմպերով աճեց ցորենի ու գարու արտադրությունը, իսկ նույն դարի վերջին ու հատկապես XX դարի սկզբին՝ խաղողի և բանջարաբոստանային զանազան կուլտուրաների արտադրությունը։ Բայց առավել արագ տեմպերով առաջ գնաց բամբակի արտադրությունը։ Բավական է նշել, որ միայն երկու տարվա ընթացքում (1861—1863 թթ.) այն աճեց հինգ անգամ՝ 30 հազար փթից հասնելով 150 հազար փթի։ Ճիշտ է, հետագա տասնամյակում արտաքին գործոնների ազդեցության պատճառով, կրճատվեցին բամբակի ցանքատարածությունները, ինչպես և ընկավ նրա արտադրությունը, բայց դա ունեցավ միայն ժամանակավոր բնույթ։ XIX դարի վերջին Հայաստանն արդեն հանդիսանում էր Ռուսաստանի բամբակի հումքի երկրորդ կարևոր բազան, առաջնությունը զիջելով Թուրքեստանի ծայրամասին։

Միաժամանակ տեղի էր ունենում գյուղատնտեսական կուլտուրաների տեսակների բարելավում։ XIX դարի կեսերից Արևելյան Հայաստան մուտք գործեց բամբակի ամերիկյան տեսակը և մինչև դարավերջը համարյա արտամղեց տեղական ցածրորակ կարակոզը։ 70—80-ական թվականներին Երևանի նահանգում սկսեցին մշակել ցորենի «առնաուտկա», իսկ Կարսի մարզում՝ «աշնանացան» տեսակները։ Ամենից նշանակալին այն էր, որ դարի կեսերից սկսեցին մշակել կարտոֆիլը, իսկ վերջին՝ պոմիդորը։

Չնայած կարտոֆիլի և պոմիդորի կուլտուրաները, պանազան պատճառներով, այն ժամանակ լայն տարածում չգտան, բայց և այնպես կայուն կերպով արմատավորվեցին Հայաստանի գյուղատնտեսության մեջ։

Միացումից հետո Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության մեջ մուտք գործեցին կատարելագործված երկրագործական գործիքներ։ Բնակիչները հողը սկսեցին վարել եվրոպական գութաններով։ 1884 թ. էջմիածնի գավառում արդեն կար 123, իսկ Սուրմալուի գավառում՝ 64 Ռանսոմա և Գենե № 3 մարկայի գութաններ։ Այդ նույն ժամանակաշրջանում Երևանի գավառում հանդես եկավ Գովարդի գործարանում պատրաստվող անգլո-բուլղարական նույնանուն գործիքը։

Սակայն հողի մշակումը եվրոպական կատարելագործված գութաններով ավելի լայն թափ ընդունեց XX դարի սկզբին։ 1910 թ. Երևանի նահանգապետը իր հաշվետվության մեջ գրել է. «Հողի մշակման նախնադարյան եղանակները սկսել են կամաց-կամաց անցնել հնության թանգարանը, և գութանները, որոնք նախկին հաշվետու տարիներին նահանգում եզակի էին կամ հաշվվում էին տասնյակներով, 1910 թ. այնքան բազմացան, որ հաշվետու տարում շատերն

իրենց հողերը վարեցին բացառապես դրանցով»[4]։ 1911 թ. Լոռիում Մանթաշևի կալվածքում երևաց տրակտորը։

Գութանների հետ մեկտեղ հանդես եկան նաև շարքացաններ ու փոցխեր, հնձիչ մեքենաներ ու քամհարներ։ Թե ինչպիսի արագությամբ էին տարածվում դրանք Հայաստանում, կարելի է դատել հետևյալ տվյալներից։ 1904 թ. Կարսի մարզում շարքացաններ ու փոցխեր բոլորովին չկային, իսկ հնձիչ մեքենաներ ու քամհարներ հաշվվում էին 150 և 420 հատ։ Սակայն 1910 թ. մարզում արդեն կար 27 շարքացան, 324 փոցխ, 412 հնձիչ մեքենա և 1395 քամհար[5]։

Լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև Արևելյան Հայաստանի անասնապահության մեջ։ Համարյա ամենուրեք աճեց անասունների գլխաքանակը։ 1829—1870 թթ. ընթացքում խոշոր եղջերավոր անասունների թիվը 16.000-ից հասավ 27.000-ի, ոչխարներինն ու այծերինը՝ 34.000-ից՝ 68.000-ի, ձիերինը՝ 22.000-ից՝ 39.000-ի, ուղտերինը՝ 500-ից՝ 16.000-ի (բոլոր թվերը կլորացված են)։

Անասնապահության մեջ քանակական փոփոխությունների հետ մեկտեղ կատարվեց նաև որակական փոփոխություն։ Էքստենսիվ անասնապահությունը սկսեց քայքայվել և տեղ-տեղ առաջացավ ինտենսիվ անասնապահություն։ Երկրի մի շարք շրջաններում անասուններն արդեն պահում ու բազմացնում էին վաճառելու նպատակով, իսկ այլ վայրերում՝ կաթը մշակելու և ստացված արդյունքը արտահանելու համար։ Այլ կերպ ասած՝ պապենական անասնապահություններ կամաց-կամաց արտամղվում էր և իր տեղը զիջում մսային ու կաթնային անասնապահությանը։ Այս տեսակետից ամենից առաջ աչքի ընկավ Լոռին, որտեղ արտադրում էին բարձրորակ կաթնամթերքներ ու հաջողությամբ մրցում ռուսական շուկաներում վաճառվող կաթնամթերքների հետ։ Հետաքրքիր է հետևյալ փաստը։

1882 թ. Մոսկվայում, երբ կազմակերպվեց անասնապահական մթերքների ցուցահանդես, Լոռիի ձեռնարկատերերից մեկը՝ հայտնի Կուչենբախը ուղարկեց իր պանիրը։ Մոսկվայում չհավատացին, որ Կովկասում, ցարական չինովնիկների կարծիքով, այդ կիսավայրենի ծայրամասում, կարող են պատրաստել այդքան բարձրորակ պանիր։ Եվ Կուչենբախին մեղադրելով խաբեբայության մեջ, նրա պանիրը հեռացրին ցուցահանդեսից[6]։

XX դարի սկզբին անասնապահությունը Լոռիում ստացավ այնպիսի զարգացում, որ ժամանակակիցներն այն անվանում էին «Հայկական Շվեյցարիա»։

Բացի Լոռիից, անասնապահությունը զգալի չափերով առաջադիմեց նաև Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և հատկապես Կարսի մարզում։ Միայն 7 տարվա ընթացքում (1905—1912) Կարսի մարզում կաթնամշակման ձեռնարկություններն աճեցին ավելի քան 10 անգամ, կաթի արտադրությունը՝ 5 անգամ, պանրինը՝ 12 անգամ, իսկ կովերի գլխաքանակը՝ 7 անգամ[7]։

Ձեռնարկատերերը ամենուրեք լավացնում էին անասունների տեսակները։ Նրանք աշխատում էին բազմացնել այնպիսիները, որոնցից կարելի էր ստա-

---

[4] Центральный Государственный исторический архив Грузинской ССР. ф. 13. оп. 15. д. 1178. л. 2.

[5] «Обзор Карсской области» за 1903, 1904, 1910 гг.

[6] «Материалы для устройства казенных летних и зимних пастбищ и для изучения скотоводства на Кавказе», Тифлис, 1887, т. I, стр. 788.

[7] «Обзор Карсской области» за 1905—1907, 1909, 1910 гг., «Памятная книжка Карсской области на 1914 г.».

նալ շատ միս ու կաթ, կամ բուրդ ու մաղ։ Եվրոպայից բերեցին ցեղական ցուլեր ու կաթնատու կովեր, ավելացրին նրբագեղմ ոչխարների գլխաքանակը և զարկ տվեցին անբորական այծերի աճին, որոնք հատկանշվում էին համեղ մսով, կաթով, հիանալի մազով ու աղվամազով։ Ձեռնարկատերերը միաժամանակ կիրառեցին սերզատ մեքենաներ ու բարելավեցին պանրի ու յուղի պատրաստման եղանակները։ Նրանք սկսեցին արտադրել շվեյցարական ու հոլանդական պանրի տեսակներ և ուղարկել վաճառքի մինչև Մոսկվա։

Ձեռնարկատերերն ու հարուստ անասնատերերն իրենց անասունները կերով բավարարելու նպատակով թե՛ սեփական և թե՛ վարձակալած հողերի վրա սկսեցին ցանել զանազան խոտաբույսեր։ Դրա հետևանքով, Արևելյան Հայաստանում անասնակերը դարձավ ավելի բազմատեսակ ու սննդատու։ Նրանք զարկ տվեցին հատկապես էսպարցետի ցանքատարածությունների ընդարձակմանը և 1912 թ. դրա սերմի այնպիսի պահանջ ներկայացրին, որ տեղական իշխանություններն անկարող եղան բավարարել։ Այս երևույթը բավական ուշագրավ է, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ անգամ XIX դարի վերջին իշխանություններն ու գյուղատնտեսներն իրենք էին պրոպագանդում և առաջարկում բնակիչներին էսպարցետի մշակման անհրաժեշտությունն ու առավելությունը։

Միացումից հետո տևական լճացումից ու քայքայումից դուրս եկավ նա՝ Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը։ Արհեստը դանդաղ, բայց հաստատապես սկսեց առանձնանալ երկրագործությունից և կենտրոնանալ քաղաքներում։ Բազմաթիվ արհեստավորներ եկան նաև Արևմտյան Հայաստանից։ Այդ տեղաշարժերի հետևանքով Արևելյան Հայաստանում մոտ 30 տարվա ընթացքում առաջացավ երկու քաղաք՝ Ալեքսանդրապոլը՝ 1837 թ. և Նոր Բայազետը՝ 1857 թ.։

Արհեստավորները սկսեցին դառնալ մանր ապրանքարտադրողներ, աշխատելով այժմ ոչ այնքան պատվիրատուի պահանջարկներով, որքան պատրաստած ապրանքները շուկայում վաճառելու նպատակով։ Երկրի քաղաքներում բացվեցին բազմաթիվ մանր ապրանքային բնույթի արհեստանոցներ։ Նման արհեստանոցներ բացվեցին նաև որոշ գյուղերում։

Արդյունաբերության մի շարք ճյուղերում մանր ապրանքային արհեստանոցները վեր էին ածվում մանուֆակտուրային տիպի ձեռնարկություններիս։ Առաջ եկավ մանուֆակտուրային արտադրություն իր թե՛ սաղմնային և թե՛ քիչ ու շատ զարգացած ձևերով։

Բայց Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը չկանգնեց զարգացման մանուֆակտուրային մակարդակի վրա։ Մի շարք տեղերում այն ավելի առաջ շարժվեց և հասավ գործարանային ստադիային։ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին գործարաններ հիմնադրվեցին երկրի արդյունաբերության սպիրտային խմիչքների արտադրության, բամբակի նախնական մշակման, մետաքսաթելի պատրաստման, մետաղամշակման, կաշեգործական և այլ ճյուղերում։ Ճիշտ է, այն ժամանակվա գործարանները հատկանշվում էին տեխնիկական ավելի պրիմիտիվ կառուցվածքներով և արտադրության ավելի ցածր տեմպերով, բայց, այդուհանդերձ, դրանք առաջադիմական մեծ երևույթներ էին պարսկական տիրապետության տարիների համեմատությամբ։

Բուռն կերպով զարգացավ Արևելյան Հայաստանի լեռնային, մասնավորապես պղնձի, արդյունաբերությունը։ Սկսած 40-ական թվականներից մեկը-

մյուսի ետևից բացվեցին նոր հանքեր, որոնց թիվը քսան տարվա ընթացքում (1847—1867) հասավ 11-ի։ Այդ առաջընթացի շնորհիվ Հայաստանը պղնձի արտադրության մեջ Անդրկովկասում գրավում էր առաջին տեղը։ Բավական է նշել, որ 1863—1868 թթ. նա տալիս էր Անդրկովկասի ամբողջ պղնձի ավելի քան 82 տոկոսը։ XIX դարի վերջին և հատկապես XX դարի սկզբին պղնձի արտադրությունը Հայաստանում հասավ անհամեմատ մեծ չափերի։ Իբրև հումք հայկական պղինձը ստացավ այնպիսի կարևորություն, որ իր վրա հրավիրեց իմպերիալիստական կապիտալի ուշադրությունը։

Ռուսաստանին միացումից հետո Արևելյան Հայաստանի արդյունաբերության հին ճյուղերի կողքին երևան եկան նորերը. 1870-ական թվականներին ծայր առան ծխախոտի արտադրությունն ու մետաղամշակումը, 80-ական թվականներին՝ ալբումինի պատրաստումն ու տակառների արտադրությունը, 90-ական թվականներին՝ կոնյակի թողարկումը և այլն։

Երկրի արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններում տակավին գերիշխում էին պապենական արտադրական գործիքները։ Բայց մի շարք ձեռնարկություններում երևան եկան նորերը՝ բարձրացող կապիտալիստական էպոխային բնորոշ, կատարելագործված գործիքներն ու մեքենաները։ Այսպես, բամբակի նախնական մշակման ասպարեզում մուտք գործեցին եվրոպական կոտոնջիները և սկսեցին արտամղել տեղական պրիմիտիվ չագրիխները։ Թե ինչպիսի արագությամբ էր տեղի ունենում այդ արտամղումը, կարելի է դատել հետևյալ տվյալներից. 1864 թ. Երևանի նահանգում կար միայն երեք ջին, իսկ 90-ական թվականներին դրանց թիվը հասավ 346-ի։ Երևանի նահանգապետը 1893 թ. իր հաշվետվության մեջ արձանագրում էր. «Ջինների թիվը մշտապես աճում էր, իսկ բամբակի մաքրման հին եղանակը, որը կատարվում էր այսպես կոչված «չագրիխների» օգնությամբ, արդեն անցել է հնության թանգարանը»[8]։ Տեխնիկական վերակառուցման շնորհիվ, Արարատյան դաշտում հիմնվեցին բամբակազտիչ մի շարք խոշոր ձեռնարկություններ, որոնք աշխատում էին շոգու, նավթամոտորի, ջրի կամ ձիու ուժով։

Կատարելագործվեց նաև սպիրտային խմիչքների պատրաստման տեխնիկան։ Իրենց գործարաններում նորանոր ապարատներ տեղավորեցին Թաիրովը, Գյոզալովը, Այդինովը, Բաբախանովը, Աֆրիկովը, Նուստովը և ուրիշներ։ Պղնձի հանքանյութի արտադրման ու մշակման ասպարեզում տեղի ունեցավ ուղղակի հեղաշրջում։ Կապիտալիստները ներդրեցին կատարելագործված սիստեմներ և արագացրին հանքանյութի արտադրության տեմպերը։ Նրանք հալումը սկսեցին կատարել քարածխով, իսկ մեխանիզմը շարժման մեջ դնել նավթամոտորով։ Վառարանի բոլոր մասերը բերեցին Ամերիկայից և Եվրոպայից, իսկ հանքանյութի տեղափոխման համար կառուցեցին երկաթգծեր։

Միացումից հետո Արևելյան Հայաստանում նկատելի տեմպերով աճեց աշխատանքի հասարակական բաժանումը։ Այն խորացավ թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ։ Երկրի առանձին շրջաններ, համաձայն իրենց բնակլիմայական պայմանների և հումքի տեղադրման, սկսեցին արտադրել առանձին ապրանքներ։ Այսպես, Ալավերդին և Զանգեզուրը դարձան պղնձի արտադրության վայրեր, Լոռին ու Կարսի մարզը՝ կաթնամշակման օջախներ, Արարատյան դաշտը՝ սպիրտային խմիչքների պատրաստման կենտ-

[8] «Обзор Эриванской губернии», за 1893 г., стр. 5.

յոն, Սուրմալուի գավառը սկսեց արտադրել գերազանցապես բամբակ, Երևանի ու Էջմիածնի շրջանները՝ խաղող, պանդան մրգեր ու բանջարա-բոստանային կուլտուրաներ, Ալեքսանդրապոլի գավառն ու Կարսի մարզը՝ հացահատիկ և այլն։

Աշխատանքի հասարակական բաժանման աճի հետևանքով, Արևելյան Հայաստանում վերացվեց պարսկական տիրապետությունից ժառանգություն մնացած տնտեսական մասնատվածությունը։ Երկրի առանձին շրջաններ ավելի սերտորեն միացվեցին միմյանց և համախմբվեցին մեկ ընդհանուր կյանքի մեջ։ Բարեկարգվեցին ճանապարհները ու հաղորդակցության միջոցները։ Խճապատվեցին մի քանի ճանապարհներ, հատկապես Թիֆլիս—Երևան և Ազստաֆա—Երևան ուղիները, որոնք խոշոր նշանակություն ունեցան Հայաստանը դրսաշխարհի հետ կապելու գործում։ Բացվեցին նոր ճանապարհներ, որոնք միացրին երկրի գյուղերը քաղաքների, հատկապես Երևանի ու Ալեքսանդրապոլի հետ։

Սակայն ամենից նշանակալիցն այն է, որ մուտք գործեցին երկաթուղիները։ 1899 թ. բացվեց Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս, 1902 թ.՝ Ալեքսանդրապոլ—Երևան, 1908 թ.՝ Ուլուխանլու—Ջուլֆա և վերջապես, 1913 թ.՝ Կարս—Սարիղամիշ գծերը։ Ճանապարհների բարեկարգման հետևանքով բարելավվեցին փոխադրական միջոցները։ 1864 թ. հունվարի 21-ին առաջին անգամ հեռագրական կապ հաստատվեց Թիֆլիսի ու Երևանի միջև։

Միացումից հետո աշխուժացավ նաև Արևելյան Հայաստանի առևտուրը։ Համարյա ամենուրեք բնակիչները սկսեցին արտադրել գյուղատնտեսական ու արդյունաբերական առարկաներ ոչ միայն սպառման, այլև վաճառքի համար։ Անասնապահական շրջաններն իրենց արդյունքի մի մասն ուղարկում էին վաճառքի դեպի խաղողագործական շրջանները, իսկ սրանք ընդհակառակը։ Նման փոխանակման մեջ էին գտնվում նաև երկրի հացահատիկային գավառները այգեգործական վայրերի հետ. Նատուրալ կյանքով ապրող շրջաններն ավելի կամ պակաս չափով ներգրավվում են շուկայական հարաբերությունների մեջ։ Դրամի ուժը զգացնել է տալիս իրեն համարյա ամենուրեք, իսկ առևտրի արխայիկ ձևը՝ ապրանքափոխանակությունը թեև չի վերանում, բայց նկատելի տեմպերով մղվում է ետին պլանի վրա։ Եվրոպական չափերն ու կշիռները, մուտք գործելով Արևելյան Հայաստան, նվաճում են համընդհանուր բնույթ և արտամղում են տեղական խայտաբղետ չափերն ու կշիռները։

Բացի ներքին առևտրից, զարգացավ Արևելյան Հայաստանի նաև արտաքին առևտուրը։ Հայ արհեստավորների ու գյուղացիների աշխատանքի արդյունքները վաճառքի ուղարկվեցին ոչ միայն հարևան երկրները, այլև Ռուսաստանի հեռավոր քաղաքները։ Արտահանվում էր գերազանցապես հումք, այսինքն՝ պղինձ, բամբակ, մետաքսաթել, կաշի, քանի որ Հայաստանը հանդիսանում էր ռուսական կապիտալիզմի գաղութը, նրա հումքի բազաներից մեկը։ Սակայն բացի հումքից, Հայաստանից արտահանվում էին նաև սպառման պատրաստի առարկաներ՝ կաթնեղեն, թարմ ու չորացրած մրգեր, ոգելից խմիչքներ և հատկապես կոնյակ։ 90-ական թվականների վերջերից հայկական կոնյակը արդեն արտահանվում էր Բաքու, Թիֆլիս, Բաթում, Անդրկասպյան երկրները, ընդհուպ մինչև Ղազախստան, հեռավոր Սիբիր, Ուրալ, Ռոստով, Կուրսկ, Մոսկվա, Ռիգա, Վարշավա և այլ քաղաքներ։ 1901 թ. Անդրկովկասի ակցիզային բաժնի վարիչ Լ. Պերշքեն իր հաշվետվություններից մեկում նշում

էր. «Ներկայումս համարյա չկա քաղաք, ուր չթափանցի կովկասյան (այսինքն՝ հայկական —Ա. Հ.) կոնյակը»[9]։ Հայկական կոնյակը թափանցեց նաև Պետերբուրգ, սկսեց հաջողությամբ մրցել ֆրանսիական կոնյակի հետ և արտամղել նրան մայրաքաղաքի շուկայից։

Եվրոպական Ռուսաստանը իր հերթին արտահանում էր Հայաստան արդյունաբերական ապրանքներ՝ բամբակյա ու բրգյա զանազան գործվածքներ, կտորեղեն ու հագուստ, մետաղյա բազմաթիվ շինվածքներ, հացահատիկ, պահածոների տարբեր տեսակներ և այլն։ Բայց դրանց մեջ գերիշխողը արդյունաբերական ապրանքներն էին, քանի որ ռուսական կապիտալիզմը, վերածելով Հայաստանը, մի կողմից, իր հումքի բազայի, մյուս կողմից, դարձնում էր այն իր արդյունաբերական ապրանքների վաճառքի շուկա։

Մոտավոր պատկերացում կազմելու համար, թե ինչպիսի արագությամբ էր աճում ապրանքաշրջանառությունը Եվրոպական Ռուսաստանի ու Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի միջև, բերենք հետևյալ թվերը. 1833 թ. ներմուծվել է Անդրկովկաս 576 հազար, իսկ 1870 թ.՝ 11.461 հազար ռուբլու ապրանք։ Այլ կերպ ասած՝ 37 տարվա ընթացքում Անդրկովկասի ներմուծումը մեծացել է ավելի քան 19 անգամ։ Այդ նույն ժամանակաշրջանում նրա արտահանումը դեպի Եվրոպական Ռուսաստան ավելացել է 336 հազարից 3927 հազար ռուբլով, այսինքն՝ ավելի քան 11 անգամ[10]։

Միանգամայն հասկանալի է, որ ապրանքաշրջանառության այս տեմպերը շատ բարձր էին այն տեմպերից, որոնք գոյություն ունեին պարսկական տիրապետության տարիներին։ Տնտեսական կապերի զարգացումը Եվրոպական Ռուսաստանի և Արևելյան Հայաստանի միջև, իհարկե, նպաստում եր ռուս և հայ ժողովուրդների հասարակական-քաղաքական և կուլտուրական ու գրական հարաբերությունների մերձեցմանն ու ամրապնդմանը։

Ապրանքային արտադրության աճը առաջ բերեց լուրջ տեղաշարժեր Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում։ XIX դարի երկրորդ կեսից սկսվեց ֆեոդալական հարաբերությունների քայքայման ու կապիտալիստական հարաբերությունների զարգացման պրոցեսը։ Հայ ժողովրդի պատմության մեջ բացվեց նոր դարաշրջան՝ միջնադարյան հետադիմական կարգերի կազմալուծման և այն ժամանակվա համար առաջավոր հասարակարգի՝ կապիտալիզմի առաջացման դարաշրջանը։ Հայ դրամատերերը, առևտրականներն ու վաշխառուները տեղափոխեցին իրենց գործունեությունը շրջանառության ոլորտից արտադրության ոլորտը և հիմնեցին ձեռնարկություններ ու գործարաններ։ Իսկ գյուղի հարուստները զանազան ճանապարհներով ընդարձակեցին իրենց ցանքատարածությունները և կիրառեցին վարձու աշխատանքը։ Քաղաքում միջնադարյան արհեստներին ու մանր ապրանքային արտադրությանը եկան փոխարինելու կապիտալիստական մանուֆակտուրաներն ու գործարանները, իսկ գյուղում պարսկական տիրապետության ժամանակներից եկող մուլքադարական ու թիուլդարական ֆեոդալական հողատիրությունը իր տեղն էր զիջում բուրժուական հողատիրությանը։

---

9 «Обзор отраслей промышленности в Закавказском крае, служащих источником косвенных налогов, и поступление акцизного по краю дохода за 1901 г.», Тифлис, 1902, стр. 64.

10 М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван 1958, стр. 221.

Հանրահայտ է, որ կապիտալիզմը, չնայած իր ստվերոտ կողմերին, մարդկության զարգացման պատմության մեջ ֆեոդալիզմի համեմատությամբ առաջընթաց քայլ էր։ Կապիտալիզմը հանրայնացրեց հասարակական աշխատանքը և բարձրացրեց նրա արտադրողականությունը, կտրատեց ֆեոդալական հասարակության կապանքները և ստեղծեց մարդկանց շարժունակություն։ Լենինը մատնանշում է. «Առանց բնակչության շարժունակության ստեղծման, անկարելի կդառնա նաև նրա զարգացումը և միամտություն կլիներ մտածել, թե որևէ գյուղական դպրոց կարող է տալ այն, ինչ մարդկանց տալիս է ինքնուրույն ծանոթությունը զանազան հարաբերությունների ու կարգերի հետ՝ թե՛ հարավում և թե՛ հյուսիսում, թե՛ հողագործության և թե՛ արդյունաբերության մեջ, թե՛ մայրաքաղաքում, և թե՛ ետ ընկած խուլ վայրերում»[11]։

Կապիտալիզմը ավելի խորացրեց դասակարգային հակամարտությունները և ֆեոդալիզմի գլխավոր հակասության կողքին ստեղծեց իրենը՝ հակասություն, մի կողմից, կապիտալիստների, իսկ մյուս կողմից, պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածների միջև։ Կապիտալիզմը ծնեց ամենաառաջավոր դասակարգը՝ հայ պրոլետարիատը, որը ռուս պրոլետարիատի գլխավորությամբ սկսեց պայքարել կալվածատերերի ու կապիտալիստների լծի դեմ։ Այդ պայքարում նա ցույց տվեց հերոսական օրինակներ և իր համեստ ուժերով օգնեց այն մեծ հաղթանակին, որ ձեռք բերեցին Ռուսաստանի աշխատավորները 1917 թ. հոկտեմբերին՝ բոլշևիկյան կուսակցության գլխավորությամբ։

Բայց Հայաստանի տնտեսական զարգացումը հսկայական քայլերով առաջ գնաց սովետական կարգերի հաստատումից հետո։ Մեկը մյուսի ետևից հիմնվեցին բազմաթիվ գործարաններ ու ֆաբրիկաներ։ Երկրի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը վերակառուցվեցին ժամանակակից առաջավոր տեխնիկայով։ Աշխարհի երբեմնի հետամնաց անկյուններից մեկը՝ Հայաստանը այժմ դարձել է ժամանակակից, առաջավոր, ինդուստրիալ երկիր, գիտության ու կուլտուրայի օջախ։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում՝ հայ ժողովուրդը է՛լ ավելի կզարգանա և կհասնի տնտեսական ու կուլտուրական նորանոր բարձունքների։

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 305։